

## Տ. ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**(Սամվել սարկավագ)**

*Ծնվել է 1973 թ. օգոստոսի 5-ին Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում:*

*1979 թ. ընդունվել է տեղի միջնակարգ դպրոց:*

*1990 թ. ավարտել է այն:*

*Նույն թվականին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:*

*1996 թ. մայիսի 19-ին Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գեր. Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:*

*Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր Ճեմարանի վեցամյա դասընթացը:*

*1996-97 թթ. աշխատել է Վեհարանում որպես քարտուղար:*

*1997 թ. հոկտեմբերի 30-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտաճառը՝ «Հնդկահայ գաղութը և Մայր Աթոռի նվիրակությունը Հնդկաստանում» վերտառությամբ, և ստացել գերազանց գնահատական:*

*1997 թ. դեկտեմբերի 14-ին, ձեռամբ Եգիպտոսի հայոց թեմի Առաջնորդ Գեր. Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել և օծվել է կուսակրոն քահանա:*